ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՖԻՐՈՒԶԱ ՄԱՅԻԼՅԱՆ, ԳՐԻՇԱ ՂԱՐԻԲՅԱՆ, ՌԱԶՄԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆ

Մարդկային հասարակությունը գոյատևել է մինչ օրս ոչ թե շնորհիվ մրցակցության, այլ համագործակցության:
Ֆ. Ֆուկույամա

Գիտության մեջ կան դրույթներ, որոնք կարծես թե անվիճարկելի են, ուստի գիտության զարգացումը հիմնվում է հենց այդ աքսիոմատիկ դրույթների վրա: Տնտեսագիտության մեջ այդպիսին է «մրցակցությունը տնտեսկան առաջընթացի շարժիչն է» դրույթը: Ինչպես հայտնի է, էվոլյուցիայի շարժիչ ուժը գոյության պայքարն է, իսկ տնտեսական առաջընթացի շարժիչ ուժը տնտեսական մրցակցությունն է: Տնտեսական մրցակցությունն է ապահովում ռեսուրսների արդյունավետ բաշխումը և տնտեսական արդյունավետությունը: Բայց արդյո՞ք տնտեսագիտության մեջ բացարձակացված չէ այս մոտեցումը: Մրցակցային մոդելը (վարքագիծը) տնտեսական գործունեության միակ տեսակը չէ: Մարդկային հասարակության զարգացման պատմությունը վկայում է, որ մարդու տնտեսական վարքագծին բնորոշ է և՛ մրցակցությունը, և՛ համագործակցությունը: Դեռևս 1871 թ. Չ. Դարվինը իր հայտնի աշխատության մեջ նշում է. «Մարդու էվոլյուցիայի ընթացքում սիրո և փոխօգնության բնազդների առաջացումն է թույլ տվել մարդկությանը իշխել բնությանը և ստեղծել գոյատևման և բազմացման համար լավագույն հնարավորություններ»[1]: Այս կապակցությամբ նա առանձնացնում էր քաղաքակիրթ ռասաներ, որոնց մեջ զարգացած են այդ բնազդները, և բարբարոս ռասաներ, որոնց այդ հատկանիշները զարգացած չեն: Ընդ որում, Չ. Դարվինը ենթադրում էր, որ մի քանի հարյուրամյակ անց քաղաքակիրթ ռասաները դուրս կմղեն բոլոր բարբարոս ռասաներին:

Փաստորեն, Չ. Դարվինը, միջտեսակային և ներտեսակային մրցակցության հետ մեկտեղ, փոխօգնությունն ու համագործակցությունը նույնպես դիտարկում էր որպես էվոլյուցիայի շարժիչ ուժ: Սակայն

[1] Տե՛ս **Darvin C. P.,** The Descent of Man, and Selection in Relation to Sex. London, John Murray. Albermarle Street, 1871, էջ 449:

այդ գաղափարները համարժեք զարգացում չստացան էվոլյուցիայի տեսության մեջ, և ըստ էության գերագնահատվեց մրցակցության դերը գոյության պայքարի համատեքստում: Չ. Դարվինը հաճախ կրկնում էր, որ իր գաղափարները կիրառելի են մարդկային հասարակության գործունեության տարբեր ոլորտների համար և փաստորեն դրանով ստեղծեց սոցիալական գիտություններում իր գաղափարների կիրառման տեսական հենքը. առաջացավ սոցիալ-դարվինիզմի տեսությունը, որը սոցիալական անհավասարության, երկրների տնտեսական զարգացման մակարդակների միջև եղած տարբերությունները բացատրում էր ըստ էվոլյուցիոն տեսության հիմնարար դրույթների: Այստեղ հարկ ենք համարում նշել, որ տեսաբանի վրա մեծ ազդեցություն են թողել Թ. Մալթուսի գաղափարական մոտեցումները: Չ. Դարվինը նշում էր, որ Թ. Մալթուսի տեսությունը առավել կիրառելի է կենդանական և բուսական աշխարհը վերլուծելու և օրինաչափությունները բացահայտելու համար[2]: Հատկանշական է, որ բնական գիտություններում՝ էվոլյուցիոն կենսաբանություն, սոցիալական անթրոպոլոգիա, սոցիոկենսաբանություն, էվոլյուցիոն հոգեբանություն և այլն, այսօր մեծ ուշադրություն է դարձվում համագործակցությանը, և մրցակցության հետ մեկտեղ՝ այն դիտարկվում է որպես էվոլյուցիայի շարժիչ ուժ: Այսպես, Կ. Պոլանյին առանձնացնում է ռեցիպրոկտությունը (փոխադարձ նվիրատվություններ) որպես տնտեսական հարաբերությունների հատուկ տեսակ[3]: Խաղերի էվոլյուցիոն տեսության մեջ համագործակցությունը քննարկվում է խմբային գոյատևման խնդրի համատեքստում[4]: Էվոլյուցիայի տեսության ժամանակակից հետազոտությունների արդյունքները նույնպես վկայում են այն մասին, որ բնական ընտրությունը էվոլյուցիայի միակ շարժիչ ուժը չէ[5]: Էվոլյուցիոն հոգեբանության մեջ մեծ ուշադրություն է դարձվում անհատների սոցիալական վարքագծին, որը թույլ է տալիս բացատրել անծանոթ մարդկանց մեծ խմբերի միջև համագործակցության և կոոպերացիայի մեխանիզմները[6]: Մինչդեռ տնտեսագիտության տեսության մեջ գերիշխող դիրք են զբաղեցնում մեյնսթրիմի մեթոդաբանական մոտեցումները, որոնք տնտեսական

---

[2] Տե՛ս **Darvin C. P.,** The Origin of Species. New York: Gamercy Books, 1859 (1979), էջ 459:

[3] Տե՛ս **Polanyi K.** The economy as Instituted Process. In: Karl Polanyi / Conrad M. Arensberg/ Harry W. Pearson, Trade and Market in the Early Empiries. New York, 1957, Free Press, էջ 243-270:

[4] Տե՛ս **Axelrod R. and Hamilton W. D**. The Evolution of Cooperation. Science. New Series, 1981, vol. 211, № 4489, էջ 1390-1396:

[5] Տե՛ս **Воронцов Н. Н.** Развитие эволюционных идей в биологии. М.: "Прогресс-Традиция", АБФ,1999,էջ 640:

[6] Տե՛ս **Twenge J. M., Baumeister R. F., De Wall C. N., Ciarocco N. J. and Bartels J. M.** Social Exclusion Decreases Prosocial Behavior. Journal of Personality and Social Psychologը, 2007, vol. 92, № 1, էջ 56-66:

գործակալների վարքագծի հիմքում դնում են լրիվ ռացիոնալությունն ու մրցակցային վարքագիծը, իսկ համագործակցությանը՝ որպես մարդու տնտեսական վարքագծի դրսևորման ձևի պատշաճ ուշադրություն չի դարձվում: Տնտեսության մեջ համաձայնեցված արդյունքների ստացումն ու տնտեսական գործակալների համակարգված գործունեությունը մինչ օրս բացատրվում են հիմնականում Ա. Սմիթի «անտեսանելի ձեռքով»: Ե՛վ տնտեսական հավասարակշռության տեսությունները, և՛ ինստիտուցիոնալ տեսությունը, և՛ խաղերի տեսությունը թեպետ քննադատում են մեյնսթրիմի մեթոդաբանական մոտեցումները և տնտեսական գործակալների փոխհարաբերությունների խնդրին անդրադառնում են այլ տեսանկյուններից, այդուհանդերձ նրանք կամա թե ակամա հենվում են նորդասական մոտեցումների վրա, այն է՝ ծախսերի կրճատմամբ առավելագույն շահույթի ապահովում հենց մրցակցային պայքարի շնորհիվ: Իհարկե դժվար է թերագնահատել տնտեսական մրցակցության դերը տնտեսական էվոլյուցիայում, սակայն երկրների տնտեսական զարգացման տրամաբանության ընկալման տեսանկյունից նման մոտեցումը բավարար չէ: Տարբեր երկրների տնտեսական զարգացման հետագծի ուսումնասիրությունը վկայում է, որ տնտեսական զարգացման ապահովման համար կարևոր նշանակություն ունի նաև համագործակցության ինստիտուտը: Վերջին մի քանի տասնամյակում գիտական շրջանակներում հետաքրքրության աճ է նկատվում համագործակցության ինստիտուտի՝ որպես կոորդինացման մեխանիզմի, որպես տնտեսական աճի և տնտեսական զարգացման կարևոր գործոնի ուսումնասիրության նկատմամբ: Շատ հետազոտողներ քննադատորեն են մոտենում մրցակցության ինստիտուտի՝ որպես տնտեսական կոորդինացման և տնտեսական արդյունավետության ապահովման միակ մեխանիզմի գաղափարին: Ավելին, հաճախ հնչում են քննադատություններ, թե մրցակցությունը չի նպաստում ռեսուրսների արդյունավետ բաշխմանը. մրցակցային պայքարի հետևանքով լուծարվում են շատ ձեռնարկություններ, կազմակերպություններ, որի պատճառով ռեսուրսների հսկայական կորուստներ են լինում: Առաջանում են նաև բարոյահոգեբանական լուրջ ռիսկեր, քանի որ ֆիրմաները հաճախ ձգտում են արհեստականորեն խթանել բնակչության պահանջարկը՝ հաճախ դիմելով զանգվածային գիտակցության վրա ազդեցության տարբեր տեխնոլոգիաների, և աճող պահանջարկը բավարարում են ոչ թե առավել ռեսուրսախնայող և արդյունավետ տեխնոլոգիաների կիրառմամբ, այլ «տեղեկատվական պատերազմների» միջոցով[7]: Քեմբրիջի համալսարանի պրոֆեսոր Չ. Հ. Ջունը քննադա-

[7] Տե՛ս **Бенц Д. С., Силова Е. С.** Теория конкуренции: pro end contra // "Вестник Челябинского государственного университета", 2018, № 3 (413): Экономические науки. Выпуск 60, էջ 157-164:

տում է շուկայական ազատ մրցակցության մոդելը և ներկայացնում տնտեսագիտության ու առհասարակ հասարակության մեջ այդ մոտեցման տարածման քաղաքական ենթատեքստը[8]: Վ. Մ. Պոլտերովիչը, քննարկելով մրցակցային մեխանիզմները, նշում է, որ զարգացած երկրներում գնալով նվազում է մրցակցային մեխանիզմների դերը տնտեսության կարգավորման գործում, և դրանք նույնքան անցողիկ են, որքան պատերազմները: Վերջինս առանձնացնելով փոխներգործության երեք մեխանիզմներ՝ մրցակցություն, իշխանություն և համագործակցություն, նշում է, որ էվոլյուցիայի ընթացքում առավելություն է ստանում այն մեխանիզմը, որը թույլ է տալիս նվազեցնել նյութական, սոցիալական և բարոյահոգեբանական ծախսերը[9]:

Եթե տնտեսագետ հետազոտողները քննարկում են մրցակցային մեխանիզմի թերություններն ու սահմանափակությունները և փորձում ներկայացնել դրանց հաղթահարման ուղիները, ապա տնտեսական սոցիոլոգիայի ներկայացուցիչները նախընտրում են քանակապես գնահատել, թե հասարակության մեջ վստահության մեխանիզմներն ինչպիսի ազդեցություն են թողնում երկրների տնտեսական աճի և զարգացման վրա: Այս համատեքստում հետաքրքրություն են ներկայացնում սոցիալական կապիտալի ուսումնասիրությամբ զբաղվող հետազոտողների աշխատությունները, որոնցում սոցիալական կապիտալը դիտարկվում է ոչ միայն տնտեսական աճի և զարգացման համատեքստում, այլև այդ աճն ու զարգացումն ապահովող ինստիտուտների ձևավորման մեխանիզմներն են հաճախ բխեցնում հենց սոցիալական կապիտալի կառուցվածքից[10]: Սոցիալական կապիտալը այն խողովակն է, որը թույլ է տալիս համակարգել տնտեսական գործակալների գործողությունները անորոշության և տեղեկատվության սահմանափակության պայմաններում: Համագործակցության և տնտեսական մրցակցության մեխանիզմների կիրառման հետևանքները, ազդեցության ոլորտները, փոխլրացման աստիճանն ու արդյունավետությունը մեծապես կախված են երկրում սոցիալական կապիտալի մակարդակից և սոցիալական կապիտալի բաշխվածությունից: Բայց հարկ է նշել, որ սոցիալական կապիտալի ձևավորման և բաշխման մեխանիզմների վրա մեծ ազդեցություն ունեն երկրում գործող ֆորմալ ինստիտուտների բնույթն ու դրանց գործունակությունը, որոնց կայացման և ձևավորման գործում կարևոր դերակատարում ունի պետությունը: Իր հերթին՝ սոցիալական կապիտալն ազդում է ինստիտուտների

---

[8] Տե՛ս **Чхан Х. Дж.** 23 тайны: то, что вам не расскажут про капитализм. М.: АСТ, 2014, էջ 314:

[9] Տե՛ս **Полтерович В. М.** Позитивное сотрудничество: факторы и механизмы эволюции // "Вопросы экономики", 2016, № 11, էջ 5-23:

[10] Տե՛ս **Гранноветер М.** Экономические институты как социальные конструкты: рамки анализа // "Журнал социологии и социальной антропологии", 2004, т. VII, № 1, էջ 82:

ձևավորման մեխանիզմների վրա: Հենց այս դիալեկտիկական փոխկապվածությամբ են հաճախ կանխորոշվում տնտեսական համագործակցության և մրցակցության մեխանիզմների փոխազդեցության տիրույթները: Եթե տնտեսական մրցակցությունը ագրեսիվ բնույթ է ստանում, ապա այն պետք է հավասարակշռել համագործակցության գործուն մեխանիզմների կիրառմամբ: Եվ այստեղ շատ կարևոր է պետության դերը, որը գործունակ ինստիտուտների միջոցով պետք է ապահովի սոցիալական կապիտալի ձևավորումը, կուտակումն ու հավասարաչափ բաշխումը: Սոցիալական կապիտալի դեֆիցիտը, անհավասարաչափ բաշխումը կործանարար ազդեցություն կարող են ունենալ երկրի տնտեսական աճի և զարգացման վրա: Այսօր գոյություն ունեն սոցիալական կապիտալի հետազոտության բազում մոտեցումներ, որոնք փորձում են քանակապես գնահատել սոցիալական կապիտալի ազդեցությունը երկրի տնտեսական աճի և զարգացման վրա, սակայն պայմանավորված հետազոտվող կատեգորիայի (եզրույթի) բազմաչափությամբ, բարդությամբ՝ այն հնարավոր չէ արտահայտել բացարձակ ցուցանիշներով, ուստի գնահատվում է համաթվերի միջոցով: Եթե ֆիզիկական կապիտալը մարմնավորված է արտադրության միջոցներում, մարդկային կապիտալը՝ անհատների մեջ, ապա սոցիալական կապիտալը տեղ է գտնում անհատների, կազմակերպությունների, պետական ինստիտուտների միջև փոխհարաբերություններում: Ընդ որում, սոցիալական կապիտալը կարող է կուտակվել և՛ անհատների, և՛ ամբողջ հասարակության մակարդակով: Սոցիալական կապիտալի կուտակումը իրականացվում է և՛ միկրո- և՛ մակրոմակարդակներում: Ավելին, սոցիալական կապիտալի կուտակումը բխում է հենց անհատի հոգեբանական, սոցիալական ներքին պահանջմունքներից ու կարող է իրականացվել և՛ գիտակցորեն, և՛ ենթագիտակցորեն: Սոցիալական կապիտալը կուտակվում է ոչ միայն նյութական շահի իրացման ակնկալիքով, այլ նաև զուտ հոգեբանական պահանջմունքների բավարարման համար: Մակրոմակարդակում սոցիալական կապիտալը հասարակության անդամների և ֆորմալ ինստիտուտների միջև փոխհարաբերությունների ամբողջություն է, որոնք արտացոլում են հասարակության վստահությունը դատական, օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների նկատմամբ: Այս մակարդակում սոցիալական կապիտալը հանդես է գալիս որպես հասարակական բարիք, քանի որ նրա ձևավորմանը նպաստում է առավելապես պետությունը, իսկ արդյունքից օգտվում (կամ տուժում) են բոլորը: Որքան բարձր է հասարակության մեջ ինստիտուցիոնալ վստահության մակարդակը, այնքան կատարյալ է հասարակության բարոյահոգեբանական մթնոլորտը, այնքան մեծ են տվյալ հասարակության զարգացման հնարավորությունները և տվյալ հասարակության մեջ համագործակցության արդյու-

նավետ ինստիտուտների ձևավորման հնարավորությունները: Ընդհանրապես, գոյություն ունի որոշակի փոխկախվածություն միկրոմակարդակում և մակրոմակարդակում սոցիալական կապիտալի կուտակման միջև: Եթե հասարակությունում գործող ինստիտուտները գործունակ չեն, ապա մակրոմակարդակում սոցիալական կապիտալը խաթարվում է և նպաստում ոչ թե հասարակության զարգացմանը, այլ եկամուտների բաշխման անհավասարության խորացմանը, բնակչության միգրացիային, կոռուպցիայի հետագա ընդլայնմանը, մարդկային կապիտալի իրացման պայմանների վատթարացմանը և բնակչության որոշ մասի արժեհամակարգի ձևախեղմանը: Որևէ հասարակության սոցիալական կապիտալի դրական թե բացասական էքստերնալներ ունենալը (արտաքին էֆեկտներ) կախված է այդ հասարակությունում գործող ֆորմալ ինստիտուտների արդյունավետությունից: Այն հասարակարգերում, որտեղ ցածր է բնակչության վստահությունը պետական ինստիտուտների նկատմամբ, սոցիալական կապիտալի կուտակումը միկրոմակարդակում աճում է: Սոցիալական կապիտալը սկսում է կուտակվել առանձին ստվերային կառույցներում, ինչը հանգեցնում է տնտեսության աղճատվածության: Սոցիալական կապիտալի անհամաչափ բաշխումը միկրո- և մակրոմակարդակների միջև հանգեցնում է նաև համագործակցության ինստիտուտի ձևախեղմանը, քանի որ հասարակության մեջ համագործակցությունը սկսում է ընկալվել ոչ թե որպես կոորդինացման, այլ անձկան շահերը սպասարկող մեխանիզմ: Եվ որքան մեծ է սոցիալական կապիտալի խզվածությունը միկրո- և մակրոմակարդակներում, այնքան անարդյունավետ են տվյալ հասարակությունում գործող ինստիտուտները: Ավելին, սոցիալական կապիտալի կուտակումը միկրոմակարդակում խոչընդոտում է ինստիտուտների հետագա կատարելագործման գործընթացը:

Անցումային տնտեսությամբ երկրներում զարգացող կոռուպցիան, չվճարումները, հարկերից խուսափումը, ինքնավերարտադրվող հոռետեսական տրամադրություններն ու անցումային ռենտայի յուրացման շուրջ ծավալվող պայքարը սոցիալական կապիտալի լոկալ (միկրո) ձևերի առկայության անուղղակի ցուցանիշ են: Լոկալ ցանցի գործակալները սոցիալական կապիտալն օգտագործում են իրենց նեղ տնտեսական շահերի իրացման համար՝ ի վնաս պետական և հասարակական շահերի: Ըստ էության, տեղի է ունենում բիզնեսի և իշխանության սերտաճում, ինչն իր հերթին նպաստում է սոցիալական կապերի կոնֆիդենցիալության և փակվածության աճի՝ հիմնված սոցիալական մտերմության տարբեր մեխանիզմների վրա: Իր հերթին, ձևավորված «իշխանություն-բիզնես» լոկալ ցանցերը այլևս շահագրգռված չեն կատարելագործելու գոյություն ունեցող ինստիտուտները: Ձևավորվում է յուրօրինակ «արատավոր շրջան»: Թույլ ինստիտուտները նպաստում

են սոցիալական կապիտալի ձևախեղմանը, իսկ ձևախեղված սոցիալական կապիտալը «կայունանալով», «հարմարվելով» և ինքնավերարտադրվելով ձևավորում է կայուն ոչ արդյունավետ (հասարակության տեսանկյունից) նորմ, որը խոչընդոտում է թույլ ինստիտուտների կատարելագործումը: Որքան տարածվում է կոռուպցիան, այնքան ավելի ուժեղ են սկսում աշխատել ավանդական (կոմունալ, կլանային) մշակույթի մեխանիզմները կոնկրետ սոցիալական կառույցի ներսում: Այսինքն՝ միջանձնային վստահության աստիճանը աճում է՝ նվազեցնելով այն ինստիտուցիոնալ մեխանիզմների դերը, որոնք ապահովում են քաղաքացիական վստահության անհրաժեշտ մակարդակը շուկայի գործակալների միջև: Դա անցումային երկրների ցածր տնտեսական արդյունավետության պատճառներից մեկն է:

Ամփոփելով վերը ներկայացվածը՝ կարող ենք եզրակացնել.

1. տնտեսական համակարգի ուղղահայաց և հորիզոնական համակարգման մեխանիզմների հետ մեկտեղ անհրաժեշտ է դիտարկել նաև համագործակցությունը՝ որպես տնտեսական համակարգման մեխանիզմ:

2. Տնտեսական մրցակցությունն ու տնտեսական համագործակցությունը չպետք է դիտարկել որպես համակարգման այլընտրանքային մեխանիզմներ, դրանք միմյանց փոխլրացնող մեխանիզմներ են:

3. Փոխլրացնող մեխանիզմների ձևավորման, պահպանման ու զարգացման գործում մեծ է հատկապես պետության դերը, որը, ստեղծելով գործունակ ինստիտուտներ և ապահովելով դրանց գործունեության արդյունավետ մեխանիզմներ, նպաստում է նաև սոցիալական կապիտալի անհավասարաչափ բաշխման խնդրի մեղմմանը: Իսկ երկարաժամկետ կտրվածքով՝ սոցիալական կապիտալի հավասարաչափ բաշխումն իր հերթին նպաստում է երկրի ինստիտուցիոնալ հիմնախնդիրների արդյունավետ լուծմանն ու համագործակցության առավել արդյունավետ մեխանիզմների հետագա զարգացմանը:

Բանալի բառեր – *տնտեսական մրցակցություն, էվոլյուցիա, կոորդինացման մեխանիզմ, համագործակցություն, սոցիալական կապիտալի բաշխում*

ФИРУЗА МАИЛЯН, ГРИША ГАРИБЯН, РАЗМИК ИСААКЯН – *Экономическая конкуренция и сотрудничество в контексте социального капитала.* – Вопросы экономической конкуренции и сотрудничества рассмотрены в статье в контексте теории социального капитала. В частности, проанализирован неоклассический подход к роли конкуренции как совершенного механизма распределения ресурсов. Выявлены недостатки и преимущества его конкурентного механизма и обеспечения экономической эффективности. Рассмотрены также институциональные механизмы сотрудничества как альтернативной координации экономической системы и распределения ресурсов.

Ключевые слова: *экономическая конкуренция, эволюция, механизм координации, сотрудничество, распределение социального капитала*

FIRUZA MAYILYAN, GRISHA GHARIBYAN, RAZMIK ISAHAKYAN – *Economic Competition and Cooperation in the Context of Social Capital.* – The article discusses the issues of economic competition in the context of social capital theory. Particularly, the role of economic competition as an effective resource allocation mechanism, within the framework of a new classical approach has been analyzed. The positive and negative aspects of the competitive mechanism of resource allocation and economic efficiency have been revealed. The article presents the institutional mechanisms of cooperation as an alternative mechanism of economic system coordination and resource allocation. Mechanisms of cooperation have been discussed in the context of social capital.

Key words: *economic competition, evolution, coordination mechanism, partnership, distribution of social capital*

Ներկայացվել է՝ 27.05.2019
Գրախոսվել է՝ 05.07.2019
Ընդունվել է տպագրության՝ 22.07.2019